**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2»**

ք. Երևան 5 մայիսի 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գրիգորյան, որը գործում է Ընկերության Կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի կարիքների համար «Հետիոտնային կանչի» թվով 63 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու

կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **1200000** (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, 3, և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **Կատարող** |
| Երևանի քաղաքապետարան | «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտի փող. 1 | ք. Հրազդան, Շինարարների փողոց 70 |
| Կենտրոնական գանձապետարան | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ » ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02593108 | Հ/Հ 1150016986186113 |
| Հ/Հ 900012411287 | ՀՎՀՀ 03024399 |

Է. Կիրակոսյան ______________ (ստորագրություն) Կ.Տ.

Գ. Գրիգորյան ______________ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«05» 05 2021 թ. կնքված
«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Երևան քաղաքի կարիքների համար «Հետիոտնային կանչի» թվով 63 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ**

| հրավերով նախատեսված չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | **/նախատեսվող Ֆինանսական միջոցներ/**ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 71351540/532 | **ԼՈՒՍԱՑՈՒՅՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ - 30 հատ**<br>Տեխնիկական պարամետրերը՝ համապատասխան ГОСТ.Р 52289-2004, ГОСТ.Р 52282-2004<br>փոշու եւ խոնավության անվտանգությունը՝ IP64 ГОСТ 14254-96<br>յուրաքանչյուր ազդանշանի լույսի ուժգնության կարգավորում (ավտոմատ կերպով պայծառությունը վերահսկելու հնարավորությամբ) ոչ պակաս, քան 500 cd (կանդելա), հետհաշվարկի թվատախտակով<br>կմախքի նյութը՝ հարվածակայուն քիմիական պլաստիկ/պոլիկարբոնատ<br>կմախքի գույնը՝ սեւ, մոխրագույն<br>ապակին՝ կոր , հակաշողքային, լաքապատ չկոտրվող, ակրիլային<br>չափերը՝ ոչ ավել1150x 380x 180 մմ<br>քաշը՝ ոչ ավել 9 կգ<br>առանցքի շուրջ պտույտը՝ 180 աստ<br>ապերտուրայի լուսային տրամագիծը՝ 300 մմ<br>1 լուսադիոդը վնասվելիս չվառվող լուսադիոդների քանակը՝ 1 հատ<br>լուսանշանի դիտարկման անկյունը՝ 60 աստ<br>լուսանշանի դիտարկման հեռավորությունը՝ 100մ<br>առանց ինտենսիվության նկատելի նվազման<br>ոչ պակաս, քան 44 աստ<br>ոչ պակաս, քան 70մ<br>միջին ծառայության կյանքը՝ 10-15 տարի | դրամ | **380000** | 1 | ք.Երևան | Պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պահպանման երաշխիքային ժամկետը՝ 2 տարի<br>երաշխիքային ծառայության ժամկետը՝ 2 տարի<br>աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը՝ 50 + 60*C<br>մատակարարման լարման միջակայքը՝ 110-ից 250 վ<br>հզորությունը՝ միակողմ,ոչ ավել 12 վատտ | | | | | |
| | **ԼՈՒՍԱՑՈՒՅՑ ՀԵՏՆԻՈՏԱՅԻՆ- 30 հատ**<br>Տեխնիկական պարամետրերը համապատասխան<br>ГОСТ.Р 52289- 2004, ГОСТ.Р 52282-2004<br>փոշու եւ խոնավության անվտանգությունը՝ P64 ГОСТ 14254-96<br>յուրաքանչյուր ազդանշանի լույսի ուժգնության կարգավորում<br>(ավտոմատ կերպով պայծառությունը վերահսկելու<br>հնարավորությամբ) ոչպակաս, քան 500 cd (կանդելա)<br>հետհաշվարկի թվատախտակով,<br>ձայնային ազդանշանով և կանչի կոճակով գործարկմամբ<br>կմախքի նյութը՝ հարվածակայուն քիմիական<br>պլաստիկ/պոլիկարբոնատ,<br>կմախքի գույնը՝ սեւ, մոխրագույն<br>ապակին՝ կոր , հակաշողքային, լաքապատ չկոտրվող, ակրիլային<br>չափերը՝ հետիոտնային լուսացույց 560x280x280 մմ<br>քաշը՝ հետիոտնային լուսացույց՝ 5կգ<br>առանցքի շուրջ պտույտը՝ 180 աստ<br>ապերտուրայի լուսային տրամագիծը՝ հետիոտնային լուսացույց՝<br>200 մմ<br>1 լուսադիոդը վնասվելիս չվառվող լուսադիոդների քանակը՝ 1 հատ<br>լուսանշանի դիտարկման անկյունը՝ 50 աստ<br>լուսանշանի դիտարկման հեռավորությունը՝ 80մ<br>առանց ինտենսիվության նկատելի նվազման<br>ոչ պակաս, քան 44աստ<br>ոչ պակաս, քան60մ<br>միջին ծառայության կյանքը՝ 10-15 տարի<br>պահպանման երաշխիքային ժամկետը՝ 2 տարի<br>երաշխիքային ծառայության ժամկետը՝ 2 տարի<br>աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը՝ 50 + 60*C<br>մատակարարման լարման միջակայքը՝ 110-ից 250 վ<br>հզորությունը՝ 7 վատտ<br>**Հսկիչ սարք 15 հատ**<br>կանչի կոճակով գործարկման և գիշերային ժամերին ձայնային<br>ազդանշանի անջատման հնարավորությամբ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | միջին ծառայության կյանքը՝ 10-15 տարի<br>պահպանման երաշխիքային ժամկետը՝ 2 տարի<br>երաշխիքային ծառայության ժամկետը՝ 2 տարի<br>աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը՝ 50 + 60 * C<br>մատակարարման լարման միջակայքը 110-ից 250 վ<br>հզորությունը 5 վատտ<br>Հենասյուն հենքով 10հատ<br>համալրված կանչի կոճակով , սարքերի տեղադրման խոռոչով, ներկված մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից<br>Ուղղաձիգ սյուներ20 հատ<br>համալրված կանչի կոճակով, սարքերի տեղադրման խոռոչով, ներկված մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից<br>ադրման խոռոչով, ներկված մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից<br>Ուղղաձիգ սյուներ20 հատ<br>համալրված կանչի կոճակով, սարքերի տեղադրման խոռոչով, ներկված մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից | | | | | |
| 3 | 71351540/534 | **ԼՈՒՍԱՑՈՒՅՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ - 16 հատ**<br>Տեխնիկական պարամետրերը համապատասխան ГОСТ.Р 52289- 2004, ГОСТ.Р 52282-2004<br>փոշու եւ խոնավության անվտանգությունը IP64 ГОСТ 14254-96 յուրաքանչյուր ազդանշանի լույսի ուժգնության կարգավորում (ավտոմատ կերպով պայծառությունը վերահսկելու հնարավորությամբ) ոչ պակաս, քան 500 cd (կանդելա),<br>հետհաշվարկի թվատախտակով<br>կմախքի նյութը հարվածակայուն քիմիական պլաստիկ/պոլիկարբոնատ<br>կմախքի գույնը սեւ, մոխրագույն<br>ապակին կոր , հակաշողքային, լաքապատ չկոտրվող, ակրիլային<br>չափերը ոչ ավել1150x380x180 մմ<br>քաշը ոչ ավել 9 կգ<br>առանցքի շուրջ պտույտը 180 աստ<br>ապերտուրայի լուսային տրամագիծը300 մմ<br>1 լուսադիոդը վնասվելիս չվառվող<br>լուսադիոդների քանակը 1 հատ<br>լուսանշանի դիտարկման անկյունը60 աստ | դրամ | **220000** | 1 | ք.Երևան | Պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց |

լուսանշանի դիտարկման հեռավորությունը100մ
առանց ինտենսիվության նկատելի նվազման
ոչ պակաս, քան44 աստ
ոչ պակաս, քան70մ
միջին ծառայության կյանքը 10-15 տարի
պահպանման երաշխիքային ժամկետը 2 տարի
երաշխիքային ծառայության ժամկետը 2 տարի
աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը -50 + 60 ° C
մատակարարման լարման միջակայքը 110-ից 250 վ
հզորությունը ոչ ավել 12 վատտ

**ԼՈՒՍԱՑՈՒՅՑ ՀԵՏՆԻՈՏԱՅԻՆ-16հատ**

Տեխնիկական պարամետրերը համապատասխան
ГОСТ.Р 52289- 2004, ГОСТ.Р 52282-2004
փոշու եւ խոնավության անվտանգությունը IP64 ГОСТ 14254-96 յուրաքանչյուր ազդանշանի լույսի ուժգնության կարգավորում (ավտոմատ կերպով պայծառությունը վերահսկելու հնարավորությամբ) ոչպակաս, քան 500 cd (կանդելա) հետհաշվարկի թվատախտակով,
ծայնային ազդանշանով և կանչի կոճակով գործարկմամբ
կմախքի նյութը հարվածակայուն քիմիական պլաստիկ/պոլիկարբոնատ,
կմախքի գույնը սեւ, մոխրագույն
ապակին կոր , հակաշողքային, լաքապատ չկոտրվող, ակրիլային
չափերը՝ հետիոտնային լուսացույց 560x280x280 մմ
քաշը՝ հետիոտնային լուսացույց 5կգ
առանցքի շուրջ պտույտը՝ 180 աստ
ապերտուրայի լուսային տրամագիծը՝
հետիոտնային լուսացույց 200 մմ
1 լուսադիոդը վնասվելիս չվառվող լուսադիոդների քանակը1 հատ
լուսանշանի դիտարկման անկյունը 50 աստ
լուսանշանի դիտարկման հեռավորությունը 80մ
առանց ինտենսիվության նկատելի նվազման
ոչ պակաս, քան 44աստ
ոչ պակաս, քան60մ
միջին ծառայության կյանքը 10-15 տարի պահպանման
երաշխիքային ժամկետը 2 տարի
երաշխիքային ծառայության ժամկետը 2 տարի աշխատանքային
ջերմաստիճանի միջակայքը -50 + 60 ° C մատակարարման լարման
միջակայքը 110-ից 250 վ
հզորությունը 7 վատտ
Հսկիչ սարք 8 հատ
կանչի կոճակով գործարկման և գիշերային ժամերին ձայնային ազդանշանի անջատման հնարավորությամբ
միջին ծառայության կյանքը 10-15 տարի պահպանման
երաշխիքային ժամկետը 2 տարի երաշխիքային ծառայության
ժամկետը 2 տարի աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը
-50 + 60 ° C մատակարարման լարման միջակայքը 110-ից 250 վ
հզորությունը 5 վատտ
Հենասյուն հենքով 6 հատ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համալրված կանչի կոճակով , սարքերի տեղադրման խոռոչով, ներկված մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից<br>Ուղղաձիգ սյուներ10 հատ<br>համալրված կանչի կոճակով, սարքերի տեղադրման խոռոչով, ներկված մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից | | | | | |
| 4 | 71351540/535 | ԼՈՒՍԱՑՈՒՅՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ - 49 հատ<br>Տեխնիկական պարամետրերը համապատասխան ГОСТ.Р 52289- 2004, ГОСТ.Р 52282-2004<br>փոշու եւ խոնավության անվտանգությունը IP64 ГОСТ 14254-96 յուրաքանչյուր ազդանշանի լույսի ուժգնության կարգավորում (ավտոմատ կերպով պայծառությունը վերահսկելու հնարավորությամբ) ոչ պակաս, քան 500 cd (կանդելա),<br>հետհաշվարկի թվատախտակով<br>կմախքի նյութը հարվածակայուն քիմիական պլաստիկ/պոլիկարբոնատ<br>կմախքի գույնը սեւ, մոխրագույն<br>ապակին կոր , հակաշողքային, լաքապատ չկոտրվող, ակրիլային<br>չափերը ոչ ավել1150x380x180 մմ<br>քաշը ոչ ավել 9 կգ<br>առանցքի շուրջ պտույտը 180 աստ<br>ապերտուրայի լուսային տրամագիծը300 մմ<br>1 լուսադիոդը վնասվելիս չվառվող<br>լուսադիոդների քանակը 1 հատ<br>լուսանշանի դիտարկման անկյունը60 աստ<br>լուսանշանի դիտարկման հեռավորությունը100մ<br>առանց ինտենսիվության նկատելի նվազման<br>ոչ պակաս, քան44 աստ<br>ոչ պակաս, քան70մ<br>միջին ծառայության կյանքը 10-15 տարի<br>պահպանման երաշխիքային ժամկետը 2 տարի<br>երաշխիքային ծառայության ժամկետը 2 տարի<br>աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը -50 + 60 * C<br>մատակարարման լարման միջակայքը 110-ից 250 վ<br>հզորությունը ոչ ավել 12 վատտ<br><br>ԼՈՒՍԱՑՈՒՅՑ ՀԵՏԻՈՏԱՅԻՆ-52հատ<br>Տեխնիկական պարամետրերը համապատասխան ГОСТ.Р 52289- 2004, ГОСТ.Р 52282-2004<br>փոշու եւ խոնավության անվտանգությունը IP64 ГОСТ 14254-96 յուրաքանչյուր ազդանշանի լույսի ուժգնության կարգավորում (ավտոմատ կերպով պայծառությունը վերահսկելու հնարավորությամբ) ոչպակաս, քան 500 cd (կանդելա) հետհաշվարկի թվատախտակով, | դրամ | 600000 | 1 | ք.Երևան | Պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց |
| | | ձայնային ազդանշանով և կանչի կոճակով գործարկմամբ<br>կմախքի նյութը հարվածակայուն քիմիական | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պլաստիկ/պոլիկարբոնատ,<br>կմախքի գույնը սեւ, մոխրագույն<br>ապակին կոր , հակաշողքային, լաքապատ<br>չկոտրվող, ակրիլային<br>չափերը՝ հետիոտնային լուսացույց 560x280x280 մմ<br>քաշը՝ հետիոտնային լուսացույց 5կգ<br>առանցքի շուրջ պտույտը՝ 180 աստ<br>ապերտուրայի լուսային տրամագիծը՝<br>հետիոտնային լուսացույց 200 մմ<br>1 լուսադիոդը վնասվելիս չվառվող<br>լուսադիոդների քանակը1 հատ<br>լուսանշանի դիտարկման անկյունը 50 աստ<br>լուսանշանի դիտարկման հեռավորությունը 80մ<br>առանց ինտենսիվության նկատելի նվազման<br>ոչ պակաս, քան 44աստ<br>ոչ պակաս, քան60մ<br>միջին ծառայության կյանքը 10-15 տարի պահպանման<br>երաշխիքային ժամկետը 2 տարի<br>երաշխիքային ծառայության ժամկետը 2 տարի աշխատանքային<br>ջերմաստիճանի միջակայքը -50 + 60 * C մատակարարման լարման<br>միջակայքը 110-ից 250 վ<br>հզորությունը 7 վատտ<br>Հսկիչ սարք 26 հատ<br>կանչի կոճակով գործարկման և գիշերային ժամերին ձայնային ազդանշանի<br>անջատման հնարավորությամբ<br>միջին ծառայության կյանքը 10-15 տարի պահպանման<br>երաշխիքային ժամկետը 2 տարի երաշխիքային ծառայության<br>ժամկետը 2 տարի աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը<br>-50 + 60 * C մատակարարման լարման միջակայքը 110-ից 250 վ<br>հզորությունը 5 վատտ<br>Հենասյուն հենքով 31 հատ<br>համալրված կանչի կոճակով , սարքերի տեղադրման խողոչով, ներկված<br>մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից<br>Ոիղղաձիգ սյուներ 18հատ<br>համալրված կանչի կոճակով, սարքերի տեղադրման խողոչով, ներկված<br>մոխրագույն գույնով<br>չափերը համաձայն կցված գծագրի՝ անկախ կտրվածքից | | | | | |
| | **Ծառայության մատուցման ընդհանուր պահանջների**<br>1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:<br>2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության | | | | | |

| | | |
|---|---|---|
| | իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:<br>3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝<br>• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,<br>• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,<br>• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,<br>• ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,<br>• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,<br>• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,<br>• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900012411287

Է. Կիրակոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կատարող**
«ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ
ք. Հրազդան, Շինարարների փողոց 70
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ » ՓԲԸ
Հ/Հ 1150016986186113
ՀՎՀՀ 03024399

Գ. Գրիգորյան ____________
ստորագրություն
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 05 » 05 2021 թ. կնքված*
*«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2» ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չ/ հ | գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը /ՀՀ դրամ/ |
| 1,3,4 | 71351540 | տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | | | | | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012411287
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ
ք. Հրազդան, Շինարարների փողոց 70
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ » ՓԲԸ
Հ/Հ 1150016986186113
ՀՎՀՀ 03024399

Գ. Գրիգորյան ____________
ստորագրություն
Կ.Տ

*Հավելված 3*
*«      »         2021  թ. կնքված*
*«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2»   ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հh ______________________
հվհh ____________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հh______________________
հվհh____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝   _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »   2021 թ. կնքված*
*«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը — Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. _____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 000111 [601767956 ]

PAYMENT ORDER RECEIPT

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Նոր Ավան» մ/ճ

ՊԿ\ID 1274

Ամսաթիվ\Date 05/05/21 13:44

| Դեբետ\Debit | Կրեդիտ\Credit | Գումար\Amount | |
|---|---|---|---|
| 1150016986186113 | 900008000664 | AMD | 120,000.00 |

Վճարող\Remitter
«ԷՅՋԻՌԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ
Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9903024399

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով
Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSC
NOR AVAN BRANCH
4

Գումարը բառերով\Amount in Words
*Մեկ հարյուր քսան հազար դրամ*
Նպատակ\Details
ԾԱԾԿԱԳԻՐ N ԵՔ-ԲՄԽԾՁԲ 21/26-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կատարող\Maker Արաքսյա Մարկոսյան

Կ.Տ.
ST.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 000107 [1309908022]

PAYMENT ORDER RECEIPT

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Նոր Ավան» մ/ճ

ԴԿ\ID 1274

Ամսաթիվ\Date 05/05/21 13:44

| Դեբետ\Debit | Կրեդիտ\Credit | Գումար\Amount | |
|---|---|---|---|
| 1150016986186113 | 900008000698 | AMD | 180,000.00 |

Վճարող\Remitter

«ԷՅՁԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9903024399

Շահառու\Beneficiary

Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀֆինանսների նախարարություն

Շահառուի բանկ\Beneficiary's Bank

Գանձապետական բաժանմունք

Գումարը բառերով\Amount in Words

*Մեկ հարյուր ութսուն հազար դրամ*

Նպատակ\Details

ԾԱԾԿԱԳԻՐ N ԵՔ-ԲՄԽԾՁԲ 21/26-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կատարող\Maker Արաքսյա Մարկոսյան

Կ.Տ.
ST.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «ՆՈՐ ԱՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMBUSINESSBANK CJSC NORAVAN BRANCH 4